



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ
ՄԱՏՈՒՑԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՎԱՐՔՆ ՈՒ ՕՐԻՆԱԿԸ
ԹՈՂ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԳԱՄ ԴԱՌՆԱՆ ԲՈԼՈՐԻՍ ՀԱՍԱՐ

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

Փասատինայի աւանդապահ Հայ գաղութը անմոռաց օրեր եւ հաւատքի վերանորոգման եզակի պահեր ապրեցաւ Ս. Սարգիս Զօրավարի տօնակատարութեան ամբողջ շաբաթը: Առաջաւորացի ծմապահութեան եռօրեայ եւ հնգօրեայ օրերը ուխտաւոր հաւատացեալներ յաճախակի առիթներով այցելեցին եկեղեցի, մոմ ու խունկ վառեցին, Զրիստոսի կենարար Ս. մարմինով ու արիւնով հաղորդուեցան, դիմեցին Ս. Սարգիս Զօրավարի, «Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ եւ հաւատարիմ ծառայ»ին բարեխօսութեան, որպէսզի իրենց ուխտերը Աստուծոյ ներկայացնէ՝ խնդրանքները կատարելու: Տակաւին, շաբաթավերջին, եկեղեցւոյ մեծ ընտանիքը ամբողջութեամբ եռուզերի մէջ էր, Հովիւ, Հոգաբարձութիւն, Տիկնանց Միութիւն, Սարկաւագներ ու Դպրաց դաս, լաւագոյնս պատրաստուելու մեծ Սուրբին, ինչպէս նաեւ եկեղեցւոյս անուանակոչութեան տօնին եւ մատաղի պատրաստութեան:

Կիրակի, 4 Փետրուարի առաւօտուն, եկեղեցւոյ շարականներու եւ աղօթքներու առիթնող կատարումը, մոմ ու խունկի բուրմունքը կարծեք իրենց կը քաշէին հաւատացեալներու հոգիները, որոնք հաւատքով առլցուն, խումբ խումբ, ընտանիք առ ընտանիք, հաւատքի խոնարհումով ներս կը մտնէին եկեղեցիէն, ու իրենց տեղերը գրաւելով՝ կը մասնակցէին Ս. Պատարագի երգեցողութեան: «Խորհուրդ խորհին անհաս անսկիզբն» է Աստուծոյ խորհուրդը, ահա «Հրաշափառ»ի մէջէն թափօրն է որ կը յառաջանայ համրաքայլ դէպի խորան, դէպի աղբիւրը հաւատքի ու յոյսի, լոյսի ու սիրոյ, եւ խաչակնքումին դիմաց հայու հոգին՝ կը խոնարհի աղերսանքի մրմունջով եւ կը համբուրէ խաչին մէջէն Խաչեալը Փրկիչ, մեծ ու փոքր, տարեց թէ պատանի, նոյն հաւատքով, մէկ մարմին ու մէկ հոգի դարձած:

Հանդիսաւոր Ս. եւ անմահ Պատարագը կը մատուցաներ Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանը, իսկ Ս. Խորանին կը սպասարկէին Միաբան Հայրեր՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիւմեան եւ եկեղեցւոյս Հովիւ՝ Տ. Խորեն Քինյ. Պապոշեան: Պատարագին աղօթակից էր նաեւ Թեմիս նախկին առաջնորդներէն՝ Գերշ. Ս. Եփրեմ Արք. Թապագեան:

Եկեղեցին խուռներամ բազմութիւն մը լեցուցած էր: Դպիրներուն ներդաշնակ երգեցողութեամբ, հաւատացեալները իրե՛նք ալ կ'աղաղակէին Յայոց դարաւոր շարականները. «Սո՛ւրբ Աստուած, սուրբ եւ հօօր, սուրբ եւ անմահ», «Մարմին Տէրունական եւ արին փրկչական կայ առաջի», «Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց», «Յամենայնի օրհնեա՛լ ես, Տէ՛ր», «Յիշեա՛, Տէ՛ր, եւ ողորմեա՛»: Իսկ «Հաւատամք»ին, Յայ եկեղեցւոյ սրբազան պատերն անգամ կը մասնակցէին ժողովուրդի դաւանանքին, խոստովանելով ամենասուրբ Երրորդութիւնը՝ Յայրը, Որդին, եւ Ս. Զոգին, որպէս մէկ եւ միակ Աստուած, որպէս կենարար եւ Փրկիչ ողջ մարդկութեան:

Քարոզի պահուն, Առաջնորդ Սրբազանը նախ փառք եւ գոհութիւն վերառաքեց Աստուծոյ, իր պարգեւած անթիւ ու անհամար շնորհներուն, ինչպէս նաեւ Փասատինայի Յայ գաղութը Ս. Սարգիսի անուամբ կնքուած եկեղեցի պարգեւելուն համար: Ապա Սրբազանը Յայրը խօսեցաւ Ս. Սարգիս Զօրավարի, անոր Մարտիրոս որդւոյն եւ 14 զինակիցներուն կեանքին ու քաջարի նահատակութեան մասին, վեր առնելով անոնց օրինակելի վարքը, չարին ո՛չ ըսելու իրենց յամառ պայքարն ու հաւատքը, եւ ճշմարտութեան ու ճշմարիտին՝ Զրիստոսի մասին վկայելու իրենց քաջարի կեցուածքը: Սրբազանը նաեւ անդրադարձաւ Յայ ժողովուրդի զաւակներու ու յատկապէս երիտասարդներու կապուածութիւնը Ս. Սարգիս Զօրավարին, որովհետեւ Ս. Սարգիս խնդրակատար եւ արագահաս սուրբ է, «հաւատացեալներու շրթներուն անուշ պտուղ եւ գիշեր ու ցերեկ յոյսով կանչուած» սուրբ է, նշեց Սրբազան Յայրը: Ուստի, կոչ ուղղեց Սրբազանը, հետեւելու Ս. Սարգիսի կեանքի օրինակին, անվախօրէն դիմադարձելու եւ ո՛չ ըսելու մեր կեանքին դիմաց ցցուող ամէն տեսակի դժուարութեանց, չարին խաբկանքներուն եւ փորձութեանց, սուրբերուն օրինակով անխախտ մնալու մեր հաւատքին մէջ եւ հաւատքի պատերազմը անթուլ կերպով պատերազմելու: «Ս. Սարգիս Զօրավարի վարքն ու օրինակը թող կենդանի պատգամ դառնան բոլորիս համար», եզրակացուց Առաջնորդ Սրբազանը:

Ապա, դիմելով Սուրբին, Սրբազանը շարականագրին բառերով աղօթք առաքեց, ըսելով, «Մարդոց ցաւալից կեանքին զօրեղ բժիշկ, արցունքները սրբող, նեղեալները սփոփող, վիշտերը մխիթարող, գերիները ազատող արագահաս Սուրբ Սարգիս, Զրիստոսի մօտ բարեխօս եղիր մեզի համար»:

Ս. եւ անմահ Պատարագի աւարտին, հոգեհանգստեան պահուն, Առաջնորդ Սրբազանը, իր կողքին ունենալով Յոգեւորականաց դասը, կատարեց մատաղի օրհնութիւնը, աղօթքին մէջ խնդրելով, որ այս մատաղին մէջէն Ս. Զոգին ի՛նք սրբէ բոլորիս մեղքերը, բժշկութիւն պարգեւէ բոլոր հաւատացեալներու ցաւերուն, եւ լուսաւորէ հանգուցեալ մեր հարազատներուն հոգիները:

Մատաղօրհնէքի աւարտին, թափօրը յառաջացաւ եկեղեցւոյ գաւիթը, ուր հաւատացեալները մեծ խանդավառութեամբ եւ յուզումնախառն արցունքով միաբերան երգեցին «Կիլիկիա»ն, «Ի վեհ բարձանց» մաղթերգը եւ Ազգային օրհներգը՝ «Մեր Յայրենիք»: Առաջնորդ Սրբազանը օրհնեց ներկաները, բոլորին ուխտը կատար մաղթեց, որմէ ետք, եկեղեցիէն մեկնած ժամանակ, հաւատացեալներ ստացան մասն ու մատաղը եւ հոգելից ապրումներով վերադարձան իրենց տունները:

ՍԻՐՈՅ ՃԱՇ

Նոյն օրը, կեսօրին, Ս. Սարգիս Եկեղեցւոյ յետսամասի սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, մասնակցութեամբ Զոգեւորականաց դասուն, Զոգաբարձական եւ Տիկնանց կազմերուն, Սարկաւագաց եւ Դպրաց անդամներուն, Եկեղեցւոյս գլխաւոր բարերար՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Սիւզան Կիտցիներաններուն եւ անոնց հարազատներուն, եւ եկեղեցւոյս յարակից մարմիններուն ու բարեկամներուն:

Ճաշի ընթացքին շնորհակալական խօսքերով հանդես եկան Եկեղեցւոյս հոգեւոր հովիւը, Զոգաբարձութեան ատենապետը, Տիկնանցի ատենապետուհին, Ազգային Վարչութեան անցեալի եւ ներկայի անդամներ եւ Եկեղեցւոյս գլխաւոր բարերարը: Օրհնութեան եւ գնահատանքի խօսքով Առաջնորդ Սրբազան Զայրը գնահատեց Ս. Սարգիս Եկեղեցւոյ մեծ ընտանիքը, եւ մաղթեց, որ յաջորդ տարի Ս. Սարգիսի եւ Եկեղեցւոյ անուանակոչութեան տօներէն առաջ եկեղեցին օժտուի Զայկական գմբէթով եւ զանգակատունով: Սրբազան Զօր «Պահպանիչ»ով վերջ գտաւ հոգեթով եւ հոգելից ամբողջ շաբթուան արարողութիւնները:

Պ.Վ.Կ.

DURING HOLY MASS ON THE NAME DAY OF ST. SARKIS CHURCH IN PASADENA

LET THE EXAMPLE OF ST. SARKIS BE A LIVING MESSAGE FOR US ALL

On Sunday, February 4th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted Holy Mass and the blessing of *madaghn* at St. Sarkis Church in Pasadena, on the occasion of St. Sarkis and the name day of the church. He was assisted at the altar by Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian and parish pastor Rev. Khoren Babochian. H.E. Archbishop Yeprem Tabakian also participated in the service.

During his sermon, the Prelate first thanked God for His bountiful blessings, then spoke of the lives and martyrdom of St. Sarkis, his son Mardiros, and their 14 soldiers, exalting their relentless battle against evil, and their bravery in their affirmation of the truth, Christ. Subsequently, the Prelate called on the faithful to follow the example of St. Sarkis to bravely face and reject all adversities and temptations we may face in our lives, and to remain staunch in our faith in the example of our saints. "Let the example of St. Sarkis be a living message for us all", concluded the Prelate.

During requiem service, the Prelate conducted the blessing of *madagh*, during which he beseeched God and the Holy Spirit for the atonement of our sins, for the healing of our pains, and for the mercy of the souls of the departed. Following the ceremony, the procession headed to the church courtyard where the Prelate blessed the faithful followed by the collectively singing of national and Pontifical anthems.

At the conclusion of church services, a reception took place headed by the Prelate and with the participation of Clergy members, Board of Trustees, Ladies

Auxiliary, Deacons, Choir members, Church benefactors Mr. & Mrs. Sarkis and Suzan Kitsinian and their family, affiliated bodies, and friends. During the reception, remarks were made by the Pastor, Board of Trustees and Ladies Auxiliary Chairpersons, past and present Executive Council members, and the church sponsors. The Prelate conveyed his blessings to the larger family of St. Sarkis Church and expressed his wishes for the church to be endowed with the traditional Armenian dome and belfry by the following year. The reception came to a close with the “Bahbanich” prayer.